

# ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

ԳՐԵՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

LOUSAVORCHI GANTEGHE

ԱՊՔԻ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

1997

## Զ Օ Ն

Ազգիս նահատակուած զաւակներուն՝  
որոնք իրենց հաւատքի կեանքը  
ապրեցան  
զոհողութեան գիտակցութեամբ  
ու դարձան  
մշտամրմունջ աղօթք՝  
պլպլացող կանթեղներ

# ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

(Գրեց Յովհաննէս Թումանեան)

Կէս գիշերին կանթեղը վառ  
Կախ է ընկած երկրնօրհ,  
Լուսաւորչի կանթեղն անմար  
Հայոց մըթնած երկրնօրհ:

Կախ է ընկած առանց պարան  
Արագածի կատարին,  
Ու սեղանից հրակայական  
Լոյս է տալիս աշխարհին:

Լոյս է տալիս երկա՛ր դարեր,  
Ու վառում են միջտ անշէջ  
Սուրբի մաքուր արցունքները  
Իւրի տեղակ նորա մէջ:

Ոչ մարդկային ձեռ կը հասնի  
Էն ահաւոր բարձունքին,  
Եւ ոչ ֆամին կը հանգցընի՝  
Վիշապ-ֆամին ահագին:

Երբ պատում է մութ իսաւրը  
Չընաշխարհիկ մեր երկրին,  
Երբ սիրում է ահն ու վախը  
Թոյլ կասկածոտ սրբութրին,

Ով անմեղ է, լիքը սիրով  
Ու հաւատով անսասան,  
Ով նայում է վառ յոյսերով  
Դէպի Հայոց ապագան---

Նա կը տեսնի էն մըջտավառ  
Ջահը կախած երկրնօրհ,  
Ասես՝ Աստծոյ աչքը պայծառ  
Հըսկում է ցած երկրնօրհ:

## Մ Ո Ւ Տ Ք

«Յ. Թումանյանի ստեղծական հասունութեան, ռեալիզմի և ժողովրդայնութեան ամենաբարձր փուլն սկսում է 20-րդ դարու առաջին տարիներից: 1901-1903-ին նա արմատապէս վերամշակեց, փաստօրէն նորից գրեց նահապետական հայ գիւղի կեանքը պատկերող «Անուշ», «Լոռեցի Սաֆոն», «Մարոն» պոեմները»:

«Լուսաւորչի Կանթեղը» գրուած է 1902-ին, որ կը նշանակէ, թէ այս պոեմը խտացումն է Յ. Թումանյանի **փորձառական հաւատփին**:

Հայ Հաւատփի ակունքներէն ժայթֆող Լուսաւորչի հմայիչ ու լուսապսակ Կանթեղը ուղեցոյց եղած է համայն հայութեան թէ՛ Առաքելական Եկեղեցւոյ մէջ աղօթողներուն, և թէ զանազան Յարանուանական Եկեղեցիներու հաւատացեալներու: Որոնումներու այս համեստ բացատրականով, կ'ուզենք տեսնել լուսայորդ անդրադարձումները սոյն սուրբ կանթեղին, որ Աստուծոյ լուսաբանիչ Կամֆը ցոյց կու տայ մեզի այսօր:

Ալպէն Նորատունկեան

Թորոնթօ

Յուլիս 17, 1993

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

# ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

**Ի**նչո՞ւ Լուսաւորչի՛ կանթեղը և ո՛չ ուրիշինը: Յովհաննէս

Թումանեան տեսած էր բազմաթիւ կանթեղներ և ջահեր, ինչո՞ւ կը գատորոշէ և կը բերթողէ *“Լուսաւորչի՛ կանթեղը”*: Որովհետեւ Քրիստոնէութիւնը Հայ ժողովուրդի աչքին Լո՛յս է, ինչպէս և անոր մատակարարը՝ “Լուսաւորիչ”:

Կանթեղի մը իմաստը ջատ խո՛ր է, միսթիֆական և իր մէջ գաղտնիք կը պարունակէ: Կանթեղի մը արժէքն ու անոր արժանիքը ո՛չ իր կաւէ, յախճապակիէ և ոչ ալ իր ոսկիէ շինուածքն է, այլ՝ իր հրաբորբ **ԼՈՅՍՆ** է:

Կանթեղ մը, որքան ալ ներկայացնէ մեծարժէք ձեռնարուեստի գործ, անարժէք է եթէ չունի լոյս, չունի զոհաբերութիւն և չուզեր իր միջուկը, կորիզը և ծուծը նուիրագործել: Կանթեղ մը կրնայ ունենալ բիւրեղացած և անուշահոտ իւղ փոխան կենդանական անսխորժ ճարպի և սպիտակ բամպակէ պատրոյգ, իսկ եթէ այդ ոսկեճամուկ կանթեղին պատրոյգը հպումը չէ ունեցած բոցավառ Կայծի մը, նորէն կանթեղը անարժէք կը նկատուի որպէս լուսաբորբ ջահ և որպէս ճանապարհի ուղեցոյց:

Ազգաշունչ Յ. Թումանեան չբերթողէր ոեւէ կանթեղ մը, այլ *Լուսաւորչի՛* կանթեղը: Ան կը միաձուլէ կանթեղին խորհուրդը Ս. Լուսաւորչի անձի՛ն, նուիրումին, զոհողութեան և ապրումին հետ:

Ի՞նչ է Ս. Գրիգոր Լուսաւորչի կանթեղը: Լուսաւորչի Կանթեղը մեր Եկեղեցւոյ Կաթողիկոսէն *անջատուած* մեկուսի կանթեղ մը չէ: Ան նոյն ինքն Ս. Գ. Լուսաւորիչն է, անոր զոհաբերող ապրումը իբր անզիջանելի վառեալ և բորբոքեալ լուսահեղ կանթեղ:

Լուսաւորչի կանթեղը Հայ աշխարհի հորիզոնին վրայ բարձրացաւ որպէս աննման Ոսկեդարու փառաց լոյս և կանգնեց մտքի և լոյսի կաճառներ ու հաւատքի և հոգիի տաճարներ:

Ի՞նչ էր գաղտնիքը Ս. Գ. Լուսաւորչի կանթեղին: Աշխարհի վրայ հզօրագոյն ուժը սիրոյ, զոհողութեան և նուիրումի ազդեցութիւնն է, որովհետեւ վերոյիջեալ երեք առաքինութիւնները կը բնորոշեն աստուածային ստորոգելիները: Ս. Գ. Լուսաւորչի սէրը, զոհողութիւնը և նուիրումը ազգային, իմաստասիրական կամ անձնասիրական չէր, այլ անոր սիրտը հրդեհուած էր Սուրբ Հոգիով: Անոր կանթեղին իւրը բաղաճական և դիւանագիտական *հաշիւ ներույ* չէ՛ր գապանակուած, այլ *աստուածաբուխ* էր և անսպառ: Յիսուս ըսած էր Սամարուհիին.

*«Պիտի խնդրէիր Անկէ, և Ան բեզ կենդանի՛ ջուր պիտի տար»:*

"Կենդանի Ջուր", այլ խօսքով աստուածաբուխ: 17 դարեր Լուսաւորչի կանթեղը վառ է պահուած և այսօր անոր լուսաւորումի արջաւը իր հազարաւոր կանթեղներով ու լուսատու հոգիներով կը զարդարէ աշխարհի բոլոր ցամաքամասերը իր անհատնում և աներեր հաւատնով: Արթնցէ՛ք հայեր, և ուխտեցէ՛ք մնալ հաւատարիմ Լուսաւորչի կանթեղին որ կը յատկանշէ Յիսուս Բրիստոսը՝ "Աշխարհի Լոյսը": Աստուած նախ ցոյց կու տայ Լուսաւորչի կանթեղը, ապա այդ լոյսին մէջ Ինքզինքը:

## Կէս Գիշերին կանթեղը վառ

Հեթանոս խաւարը իր հալածիչ մթութեան ջղարջը տարածած էր Հայոց աշխարհին վրայ: 32 ազնուազարմ քրիստոնեայ կոյսեր, Հոփսիմէի գլխաւորութեամբ խուսափած էին Հռոմի Դիոկղետիանոս կայսեր (284-305) հալածանքներէն ու հաստատուած Հայաստան աշխարհ: Անոնք կը զբաղէին քարոզչութեամբ և բարեսիրական ծառայութեամբ: Այս կոյսերը Հայոց աշխարհին հոգեւոր փրկութեան աւետաքեր աղանիները եղան:

Կէս գիշերին, հոգեկան մութ խաւարին և դեւերու արիւնկզակ իշխանութեան թելադրանքով, Հոփսիմէի ու Գայանէի կուսական հոյլը սրախոխուեցան ու նահատակուեցան Տրդատ Գ. թագաւորի հրամանով: Գեհենավառ մուխն ու ծուխը ջանացին կործանումի, նախճիրի և մղձաւանջի մատնել Հայաստանի գետնափոր Եկեղեցիներն ու անասան հաւատաւորներու անխորտակելի հաւատքը: Հայ քրիստոնեաներու ամբողջ կեանքը դարձաւ շարայարում մը զրկանքի թշուառութեան և հալածանքի: Սակայն հաւատի խրոխտ և աննահանջ ջահակիրը վառած էր իր անստուեր կանթեղը նոյնիսկ Խոր Վիրապի գնդանին մէջ:

Լուսաւորչի կանթեղը չսկսաւ որպէս կաէ կամ մետաղէ կանթեղ, այլ՝ կանթեղ մըն էր ան կառուցուած զգայուն մարմինէ, ազատագրուած միտքէ և անձնամատոյց հոգիէ: Լուսաւորչի կանթեղին իւրը կ'իջներ փառաւորեալ Բրիստոսէ: Անոր պատրոյգը չափաչափուած, սակայն կանգուն ու հաւատաւոր Պահլաւունին ի՛նքն էր: Ինչպէս ամէն ծաղիկ ջփումի և ճնշումի ազդեցութեան ներքեւ իր բոյրը կը տարածէ, նմանապէս "Լուսաւորչի կանթեղ"ն ալ սկսաւ սփռել իր լոյսը ո՛չ թէ ազատութեան, խրախճանքի և հեշտութեան մէջ, այլ՝ ցաւի՛ և տառապանքի բուրային մէջ:

14 երկար տարիներ Ս. Գ. Պահլաւունի աղօթեց և սպասեց, համբերեց ու որոնեց թէ ի՞նչ է *Աստուծոյ Կամօք* և իր կեանքի կոչումը: Անշուշտ չարը ջանաց զայն յուսահատեցնել, ջշնչեց անոր ականջին որ ուրանայ իր Տէրը և Փրկիչը: Չարը տեղեկացուց անոր չարչարանալի նահատակութիւնը Հոփսիմէի և անոր հաւատակիցներուն: Սակայն Խոր Վիրապի բանտարկեալը տեսած էր *"Երկիւնքը բացուած"*: Անոր հաւատքը տեսութիւն մը կամ վարկած մը չէր, այլ դարձած էր ճշմարտութիւն, իրողութիւն և իսկութիւն:

Ապրումներ և գաղափարներ կը բիւրեղանան ու կը թրծուին երբ անոնց հեղինակը կամ ոահմվիրան կ'ապրի ցաւի, երանութեան և ոգեւորութեան հարազատութիւնը:

## Կախ է ընկած երկնքից,

Առանց հաւատքի և աստուածային լոյսի, *մտքի* լոյսը սէգ է ու հպարտ, ամբարտաւան, պատուհաս և անէծք է աշխարհին: Աչագուրկներ էին ճոմերոս, Ճոն Մըլթոն, Հելէն Քէլըր, որոնք աստուածասուր լոյսին փողահարները ու ջահակիրները հանդիսացան, որովհետեւ անոնք ալ կրցան տեսնել երկինքէն կախեալ Լոյսը:

*«Ես եմ աշխարհի լոյսը»* աւետող Մարգարէն ալ կախուած էր երկնքի ու երկրի միջեւ, որպէս Դատապարտեալ մը Խաչին վրայ: Բոլոր ճշմարտութեան վկաները և լուսաւորումի ոահմվիրաները *«Կախ են ընկած երկնքից»*: Նիւթապաշտութեան խաւարակուռ փառամոլները չեն կրնար հանդուրժել լոյսի և կեանքի այգալոյսող Արդարութեան: Չարը կը "կախէ" լուսավառ կանթեղը երկնքից, յուսալով որ ան պիտի մարի կամ մեռնի:

*«Կեանքը լոյս էր մարդոց: Եւ լոյսը կը լուսաւորէ խաւարին մէջ և խաւարը չճանչցաւ Չայն»--Յով. Ա. 5:*

Խաւարը ոչ միայն կ'ուրանայ լոյսը, այլ կը խաչէ՛ գայն: Ինչպէս սերմը թաղելով չես կրնար ոչնչացնել, այլ կը բազմապատկես, նոյնպէս ալ Լոյսը խաչելով և կախելով, խաւարը չես կրնար հաստատել, սակայն մոմ մը վառելով խաւարը կրնաս հեռացնել: Կեանքն ու լոյսը որքան հալածես այնքան աւելի տարածած կ'ըլլաս զանոնք: Որովհետեւ անոնք երկրային և նիւթեղէն չե՛ն, այլ "կախ են ընկած երկնքէն":

Երկնային մարմինները *հոգեղէ՛ն* են: **Արթնքած** մարդը կը պատկանի երկինքի: Անոր լուսաւորուած միտքը և պայծառացած հոգին անկորնչելի են, որովհետեւ "կախ" են երկինքէն, այլ խօսքով, *կախուս* ունին երկինքէն: Երկնաւոր Հայրը *երբե՛մ* չլքեր Իրեն հաւատաւորը, նոյնիսկ եթէ ան բանտարկուած մնայ 14 տարի Խոր Վիրապի մէջ: Նուիրումի և տառապանքի հնոցին մէջ է որ առաւելաբար, մաքրագտուեցաւ ու խորացաւ Լուսաւորչի հաւատքը ու մնաց կանգուն, անխորտակելի և յաղթական: Որովհետեւ Ս. Գ. Լուսաւորիչ՝ ի՛նք դարձած էր կենդանի կանթեղը Լոյսի:

Չարը ճօճեց Հայ հաւատաւորներն ու դիւցազները կախադաններու վրայ, սակայն չկրցաւ տկարացնել և բնաջնջել անոնց հաւատքը, տեսիլքը և հերոսական պայքարը: Որովհետեւ Հայ նահատակներու հայեացքները սեւեռեալ էին ապագայի հեռանկարին՝ Աստուծոյ Թագաւորութեան և արդարութեան:

## Լուսաւորչի կանթեղն անմար

Անմար է Լուսաւորչի կանթեղը, որովհետեւ անոր լոյսին ակնադիւրը Աստուած է: Հաւատացեալ հայեր, մեծ ու պզտիկ, հոգեւորական և աշխարհական, անմար և անխախտ պահեցին Լուսաւորչի կանթեղը դարաւոր բարեքրու ու տառապանքներու անբարբառ զրկանքով: Քսաներորդ դարու ազատութեան, նիւթապաշտութեան և անբարոյ հարստութեան մէջ ինչպէ՞ս կրնանք անմար պահել մեր հաւատքին լոյսը:

Լուսաւորչի կանթեղը դարբնուեցաւ Խոր Վիրապի գնդանին մէջ ու դարձաւ անմար, որովհետեւ Ս. Գրիգոր ի՞նք փոխակերպուած էր կենդանի ու լուսապսակ կանթեղի: Աստուած, երկինքէն հրեջշակներ ուղղարկելով չգործեր, այլ գործակիցներ կը կանչէ: Կուզե՞ս դառնալ գործակից Աստուծոյ, որ անմար պահես Լուսաւորչի կանթեղը: Աստուծոյ կանչը ամբողջական լծակցութեամբ, ներդաշնակ գործակցութեամբ և անվերապահ զոհողութեամբ կ'ըլլայ:

Անկենդան մարմինները միայն շարժումներով կը գործեն, ինչպէս երկնային մոլորակները, մինչ իսկական գործողութեան համար անխուսափելի է մարդկային **կամֆը**: Պատրա՞ստ ենք զոհաբերելու մեր կամֆը և նուիրելու զայն Աստուծոյ որպէսզի կատարենք Անոր կամֆը, որ բարի՛ է, փրկարար՛ է և անյիշազար:

## հայոց մթնած երկնքից

Հայոց երկինքը ե՞րբ մութ եղած չէ: Հայ ազգը քանի՞ տարի և ո՞ր դարուն խաղա՞ղ ապրած է: Առանց մոռնալու իր հայութիւնը, ո՞ր ազգը ապրած է խաղաղութեան և բաղաճական պայծառ երկնակամարի տակ: Զօրաւոր ազգեր որոնք կառուցին բազմաթիւ գաղթատիրութիւններ, սպաննած եղան հազարաւոր անմեղ երիտասարդներ (իրենց ցեղակիցներէն) գոհացում տալու քանի մը բմահաճ իշխաններու և զօրավարներու փառատենչութեան: Յաղթական և "անպարտելի" Նաբոլիոն՝ ի՞ր բմահաճ տենչին համար զոհեց անհամար գարուն ֆրանսացիներ Ռուսիոյ ձիւնապատ դաշտերուն վրայ: Մակայն: Հայոց մթնած երկնքից տակ Մովսէս Խորենացի գրեց "Հայոց Պատմութիւնը": Որպէս աջակերտ Ս. Մեսրոպ Մաշտոցի ան դրկուած էր արտասահման խորացնելու համար իր ուսումը: Երբ կը վերադառնայ հայրենիք, կը տեսնէ միայն քար ու քանդ եղած հայրենի կոթողներ ու եկեղեցիներ: Պատմահայրը իր պատմութեան գիրքը կը գրէ Մահակ Բագրատունիի խնդրանքով և ոչ նիւթական ճոխութեամբ կամ կեանքի ապահովութեամբ:

Լուսերգակ բանաստեղծ Ս. Ն. Ծնորհալիի լուսածորան գրիչը

ստեղագործած ու արտադրած է անհամար սրբազան շարականներ և աղօթքներ երբ եղեսիա կը կործանէր ու Հայաստան աշխարհ կը Բանդուէր:

Տարաբախտ Կովիտաս վարդապետ՝ հոգւոյ խորանին, կը սգայ իր ժողովուրդին խաչելութիւնը

Մտի, հոգիի և հաւատի հերոսները մագլցած են աստուածութեան լուսաձիր հորիզոններ և առաջնորդած իրենց ազգակիցները յոյսի և լոյսի հոգեւոր հայրենիքը: Անոնք ներշնչած են նորածիլ սերունդը որ դառնան ջահակիրները յետագայ սերունդներուն: Անոնք չեն ակնկալած խաղաղութիւն և հանգստութիւն, որովհետեւ ներկայ աշխարհը պայքարի՝ ջրջանն է Բարիին՝ ընդդէմ չարի: Այս պայքարամարտը նուիրական հերոսներ ու մահրասրբուած հաւատացեալներ կը կանչէ լեցնելու համար իր ջարհերը: Անցեալ դարերուն, Հայը ունեցած է անձնուէր ու աննահանջ հաւատաւորներ, որոնք անմար պահեցին Լուսաւորչի կանթեղը: Ներկայ կանչը Բեզի և ինծի է ո՛վ հաւատացեալ:

## **Կախ է ընկած առանց պարան**

**Թ** շնամին կրնայ կտրել պարանը ուրկէ կախ է Լուսաւորչի պարանը, որպէսզի ան իյնայ գլտորի և կործանի: Սակայն ամենողորմ Աստուած Իր հրեշտակներուն միջոցով վեր բռնած է հաւատի կանթեղը և հոգւոյ լուսաւորումը:

Համայնավար անաստուածութիւնը կտրած էր հաւատի լուսահեղ կանթեղին պարանը, սակայն Ս. Էջմիածնի անձնանուէր հոգիները՝ իրենց մարմիններու զոհաբերութեամբ ու նահատակութեամբ բարձր բռնեցին այն կանթեղը որուն լոյսը վառած էին Ս. Թադէոս և Բարթողիմէոս առաքեալները:

Արեւմտեան նիւթապաշտ, անձնակեդրոն և զուարճութեան աստուածներն ալ կը ջանան կտրել Լուսաւորչի կանթեղին պարանը: Կարիքը հաւատացեալ սուրբերու է, որոնք ի գին ամէն զոհողութեան վեր պիտի բռնեն հաւատի, յոյսի և լոյսի կանթեղը:

**Կոչը մեր բոլորին է:**

## **Արագածի կատարին**

**Ա**րագածը Բարսէսի վրայ կրնայ բարձր գագաթ մը նկատուիլ, սակայն Հայ հոգիին համար ան ունի նաեւ յաւելեալ իմաստ մը: Արագածի անուան ծագումը, կարգ մը հայ լեզուաբան պատմիչներ կը կապեն հեթանոս Արա աստուծոյն: Անոնք "արագած" բառը կը վերծանեն սապէս՝ Արա +գահ = Արայի գահը...:

Բանաստեղծ երգիչ հեղինակը երբ կ'ըսէ.

*«Արագածի կատարին»,* ան ըսել կ'ուզէ, թէ Բրիտանական հաւատքը յաղթանակելով հեթանոս աստուածներու և աստուածուհիներու, գրաւեց անոնց գահը: Հեթանոս աստուածները՝ Զեւս, Աթենաս, Անահիտ, Աստղիկ և Աֆրոսիդ շօշափելի, տեսանելի և մարդոց արուեստագիտութեամբ և մտապատկերով հնարուած աստուածներ էին: Փոխանակ Աստուած Ճշմարիտ ստեղծած ըլլալու մարդը, մարդիկ իրե՛ւմ հնարած ու շինած էին իրենց ազգային աստուածները:

Հեթանոս աստուածներ կարող չէին կանգնիլ արագածի կատարը առանց *պարանջի* (շօշափելի նիւթականով): Լուսաւորչի կանթեղին Լուսոյ Աստուածը նիւթի՛ գօրութեան և օժանդակութեան կարիքը չունի: Ան ամենակա՛լ Աստուած է, գերբնական և ամենակարող: Ան յաղթահարած է մահուան և գերեզմանին, յարուցանելով Իր Միածինը հողայնութեան կապանքներէն:

*«Այս Տիտուսին է որ Աստուած յարութիւն տուաւ,  
որուն մե՛նք ամէնքս ալ վկայ ենք»* -- Գործք. Բ. 32:

Աստուածային գերահրաշ գօրութեամբ կախ է կանգնած Լուսաւորչի կանթեղը Արագածի կատարին: Դարեր անվախճան Լուսաւորչի կանթեղը կանգնած պիտի շարունակէ մնալ Արագածի կատարին, որովհետեւ պարանով (մարդկային գօրութեամբ) չէ՛, այլ աստուածայի՛ն հրաշքով կը կանգնի ան:

## Ու սեղանից հսկայական

Հայ լեզուի մէջ "սեղան" բառը բազմաթիւ իմաստներ և յիշատակներ կ'արթնցնէ մեր մտերուն մէջ: Կայ *ճաշի՛* սեղան ուր ընտանիքը կը հաղորդուի թէ՛ ուտելիքով և թէ՛ մտքով (խօսակցութեամբ): Կայ *լումայակոխի՛* սեղան, ուր գբօսաշրջիկներ և առեւտրականներ կը փոխանակեն իրենց դրամները: Կայ նաեւ *կանաչ* սեղաններ թղթախաղի համար, ուր մարդիկ կորսնցնելէ յետոյ իրենց դրամները, կը կորսնցնեն նաեւ իրենց *արժանապատուութիւնը* և *սրբութիւնները*: ու կը դառնան խաղամոլ: Զաղափական նպատակներու համար մտածուած ու շինուած է *կէոյ* սեղան ուր չես կրնար զանազանել մեծը պզտիկէն և գլխաւորը պոչաւորէն, բոլորը հաւասար են ըստ դիրքի:

Կայ նաեւ զոհի սեղան, ուր պատարագամատոյց քահանան կ'օրհնէ հացն ու գինին, որպէս Քրիստոսի Մարմինն ու Արիւնը: Եկեղեցւոյ խորանի սեղանը ցոլացումն է Գողգոթայի Խաչելութեան երբ Տիտուս յայտնեց Աստուծոյ անսպառ մարդասիրութիւնը Իր Անձնագոհութեամբ (Ա. Կորնթ. Ժ. 14-22): Հետեւաբար, բանաստեղծ Յ. Թումանեան, Արագածի կատարը կը ջանայ նմանցնել Գողգոթայի բարձունքին ուրկէ Լուսաւորչի կանթեղը կը ստանայ իր լոյսը, ինչպէս լուսինը արեւէն:

Կ'ուզեմ հոս մէջքերել Պօղոս առաքեալին խօսքը, որ պատշաճօրէն կը

բացայայտէ մեր մեկնաբանութիւնը.

**«Քրիստոսի հեա խաչը ելայ, այլեւս կենդանի եմ. ոչ թէ ես, այլ իմ մէջս կենդանի է Քրիստոս»--Գող. Բ. 20:**

Իւրաքանչիւր քրիստոնէայ, կանթեղ մըն է և պարտի ցոլացնել Յիսուս Քրիստոսի *ապրումն*, ու նուիրումը հանդէպ մարդկութեան: Այնուհետեւ "սեղան"ը նիւթ ըլլալէ պիտի դադրի ու դառնայ սուրբ գաղափար և ամենօրեայ *ապրում*: Հաւատացեալներու ճշմարիտ, անկեղծ և բիւրեղացած ապրումն է, որ պիտի դառնայ հսկայական ու նաեւ աւետարանչական սեղան (լոյս) մը համայն աշխարհի:

### **Լոյս է տալիս աշխարհի**

Այնպէս ինչպէս կանթեղի մը իւղին ու պատրոյգին այրի՛ն ու ճենճերի՛ն է, որ լոյս կը դառնայ և յոյս կու տայ, նոյնպէս հաւատացեալներու ծառայութիւնը, նուիրումը և զոհաբերութիւնն է, որ պիտի լուսաւորէ մարդկութեան միտքը և արթնցնէ անոնց սրտերու զգայնութիւնը: Խօսքը և Բարոգութիւնը ունի՛ն իրենց ազդեցութիւնը, սակայն զոհողութիւնը, արցունքը ու մանաւանդ արիւնը անգերազանցելի ազդակներ են, որոնք կը փոխակերպեն դառնութիւնը՝ լուսաշինութեան, ցաւը՝ կորովի, ընդվզումը՝ ստեղծագործութեան և մեղաւորը՝ սուրբ հաւատացեալի (նման Անտակ Արդիին):

Եթէ ունինք կոչում և առաքելութեան ոգի լուսաւորելու համար աշխարհը Քրիստոսի Աւետարանին, խօսքը (Բարոգութիւնը) կենդանի բարբառով (ապրումով) փոխանցելու ենք, ինչպէս ըրաւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս:

Լուսաւորութիւնը նախաֆայլն է ստեղծագործութեան և անհատի մը փոխակերպութեան և ինքզինքին գալու, ճշմարտութիւնը ճանչնալու և նոր ստեղծուած մը ըլլալու համար: Մոյն պատճառաւ Աստուած նախ ստեղծեց Լոյսը.

**«Եւ ասաց Աստուած, Եղիցի լոյս. և եղև Լոյս»:**

Վերոյիջեալ "ասաց" բառը նաեւ կը նշանակէ *"կառնեցաւ"*.

Որպէս հայ հաւատացեալներ, մեր խօսքով ու ապրումով կը լուսաւորե՞նք մեր անմիջական շրջանակը, թէ առաւել եւս կը պղտորենք գայն երբ մեր խօսքն ու կենցաղավարութիւնը զիրար կը հակասեն: Մարդկային ժամանակը երկու անհերքելի երեւոյթներէ կը բաղկանայ՝ լոյսէ և խաւարէ, որոնք կը կազմեն ցերեկը և գիշերը: Չարերը չեն փորձիր լոյսէ: Մաղթանքս է որ Բեթղեհեմի աստղի լոյսէն ներթափանցուած և պայծառացած նոր արարած մը դառնանք նախ մենք, ու յետոյ հոգիով ու ճշմարտութիւնով

փոխանցենք Քրիստոսի լոյսը ուրիշներու:

## Լոյս է տալիս երկա՛ր գարեր,

**Մ**տքի լոյսը միանալով արեւի լոյսին անտեսանելի տիեզերք մը կը տեսնէ, որ կը կոչուի տրամաբանութեան ու խորհուրդի աշխարհ: Մտքի լոյսը կը գործէ որպէս կշիռ: Ան կը հաշուէ, կը չափէ, կը գննէ ու կը բաղդատէ: Հոգեկան լոյսը բարձրագոյն լոյսն է որ մարդ էակը ստացաւ Գերագոյն Լոյսէն: Այս լոյսը կ'առաջնորդէ մարդը ո՛չ միայն գիտնալու և ճանչնալու, այլ ճանչցուած Մէկուն (Աստուծոյ) հետ միաձուլուելու, գԱյն ապրելու և Անոր նմանելու:

Հոգեկան Լոյսն է, որ Մագդաղենացին աղտոտ կեանքէն բարձրացուց անբասիր սրբութեան և աստուածային սպասաւորութեան: Հոգեկան Լոյսի ներթափանցումն էր սրտի մը մէջ, որ փոխակերպեց մաքսապետ Ջակֆէոս մը դառնալու բարեգործ ու մարդասէր: Հոգեկան Լոյսն է որ կառոյց վանքերը, մենաստանները, որբանոցները, հիւանդանոցները, բորոտանոցները ամոճելու համար մարդկային վիշտն ու թշուառութիւնը: Հոգեւոր Լոյսը երաջխիհ՛ն է յաւիտենական կեանքի:

Այսպիսի լոյս մը անմա՛ր է ու յաւերժական:

Ինչո՞ւ: Որովհետեւ ի՛նչ որ *ինքնագոհ* է, յաւիտենական է: Միայն Ինքնագոյ էակ մը անսպառ է, ինքնահոս և ինքնամատոյց: Աստուած Ինք-գինք մատուցանելով, նուիրելով և Միածինը Մարդացնելով կը դաստիարակէ մեզ որ դառնանք Իրեն նմանող: Հաւատացեալ մը, տալո՛ւ ու բաժնելով, սիրելո՛ւ և ինքզինք նուիրելով կը դառնայ յորդաբուխ և առատահոս:

Լուսաւորչի կանթեղը անսպառօրէն լուսաւորած է Հայոց աշխարհը և հայկազուններու սրտերը 17 դարեր ջարուսակ: Սոյն դարաջրջաններուն, Յազկերտներ և Ճահ Ապպասներ փորձած են մարել սուրբ կանթեղը, բայց իզուր: Ան ջարուսակած է իր լուսոյ արջաւը և առաջելութիւնը մինչեւ 20-րդ դար: Մոնկոլներն ու Ճենկիզիսները բանդած ու կործանած են եկեղեցիներն ու վանքերը, սակայն անոնց ակերակներն ու փլատակները դարձած են խօսուն և լուսատու բոլոր հայ սրտերուն: Համայնավար վարչակարգը գիտութեան լոյսով խաւար և անաստուածութիւն ներմուծեց նոր սերունդի սրտերուն ու հոգիներուն մէջ: Սակայն անթառամ կանթեղը Լուսաւորչին, ներշնչուած ու հրդեհուած իր Քրիստոսի ոգիով, իր հաւատալոյս շղարջը կը սփռէ Հայաստանի տարածքին:

Գիտութիւնը կրնայ վերականգնել մարդը արտաբնապէս որպէս երեւոյթ, բայց ո՛չ երբեք հոգեւո՛ր, իմացակա՛ն ու բարոյական մարդ: Հոգեմտաւոր մարդը կը ճանչցուի՝ միա՛յն աստուածային տրամադրութեամբ: Գիտութիւնն ու բաղաճակրութիւնը նոյնիսկ *չարիք* են առանց բարոյական զօրութեան:

## Ու վառուժ են միջտ անջէջ

Ի նչպէ՞ս կարելի է վառուժ ու անջէջ պահել Լուսաւորչի կանթեղը: Մոյն հարցումը պատասխանելէ առաջ, կայ հետեւեալ հարցումը.

**«Կարի՞ք ու նի՞նք վառ պահելու անցեալ դարերէն մնացած կանթեղ մը»:**

Նոր սերունդը, բազմաթիւ հին կարասիներ և տան կազմածներ կ'արտասէ տունէն: Ոչ միայն կարասիի նման գործածական պիտոյիներ, այլ նաեւ դուրս կը վտարէ *բարոյակլան*, ըմբոնումներ և ամօթխած պարկեշտութիւնն (զգաստութիւններ): Լուսաւորչի կանթեղը պիտի՝ *մնայ* վառուժ ու պիտի՝ *զոյաձեռէ* միջտ անջէջ, նոյնիսկ եթէ մեր մէջէն միայն *փոքրամասնութիւն* մը ըլլայ փափաքողը և հաւատացողը: Եթէ միայն փոքրամասնութեան մնացորդ մը կայ, Լուսաւորչի կանթեղը պիտի՝ դառնայ անջէջ:

Որովհետեւ:

Իրագործութիւնները կը յաջողին ո՛չ թէ մեծամասնութեան բուէով, այլ՝ որովհետեւ իրագործիչները *զոյածօ՛ն* նուիրուած և հաւատացո՛ղ են իրենց նպատակին: Մեծ եղած է փոքրամասնութեան ջինարար և փրկարար դերը ընկերային կեանքի բարելաման մէջ: Ո՞վ կը հաւատար թէ հալածեալ ու չարչարեալ Եկեղեցին օր մը պիտի տապալէր Հոռմի կայսրութիւնը: Ո՞վ կը հաւատար 20-րդ դարու սկիզբին, որ ափ մը հայրենասէր ու գաղափարապաշտ ազգասէրներ պիտի կարենան վերականգնել Հայ պետականութիւնը երբ բոլոր **աղաներն** ու մեծ կարծուածները, հակառակ էին փոքրամաս "պաշը պօզուֆներու":

Երուսաղէմի Բահանայական և մտաւորական կարծուած դասը միթէ կը հաւատա՞ր թէ ափ մը ձկնորս Գալիլեացիներ կրնան տարածել Նազովրեցի Յիսուսի մը գաղափարներն ու հեռանկարները համայն աշխարհի: Սակայն իրականացաւ անխուսափելին և անհաւատալին *փոքրամասնութեան*, կողմէ:

Եկեղեցին հաւատացեալներու *Բանակլական* տոկոսով չ'ընթանար, այլ անոր *որակակլա՛ն* իրողութեամբ: Լուսաւորչի կանթեղին իւրը թէեւ սպառի, սակայն պիտի *չհասնի՛*, որովհետեւ այդ որակաւոր փոքրամասնութիւնը՝ իրենք զիրենք պիտի վերածեն իւրի ու զոհագործուելով անմար ու անջէջ պիտի պահեն Լուսաւորչի կանթեղը, որ ցոլացումն է հաւատք առ Աստուած:

## Սուրբի մաքուր արցունքները

Սրբութեան և մաքրութեան յատկանիշները աստուածաբանական տեսութիւններ ըլլալու չեն միայն, այլ պէտք է գործօ՛ն դեր ալ ունենան մեր իւրաքանչիւրի *կեանքի*ն մէջ: Նիւթը ինքնին իբր նիւթ ոեւէ ջնորոն կամ

գօրութիւն չի պարունակեր, այլ Սուրբ Հոգւոյն ներթափանցումով է իր գօրութիւնը: Նոյնն է նաեւ մարդ արարած: Մարդ, սրբանալո՛ւկ կը տեսնէ երկինքը բացուած ու կը ստանայ ապագայի նախատեսութիւնները: Երբ եկաւ Սուրբ Հոգին, աշակերտները և Յիսուսի հետերդները դարձան համակ հաւատք, քաջութիւն, ճանաչում, խօսք և սէր: Երբ սրբութիւնը թափանցէ մարդկութեան, մարդկայինը աստուածայինի կը վերածէ, սկարութիւնը՝ գօրութեան և կաւը լոյսի: Սրբակրօնին հոգիէն, սրտէն ու մտքէն կ'աղբիւրէ սէր, աղօթք և արցունք:

Սրբացած այս արցունքն է որ պիտի ողողէ Լուսաւորչի կանթեղը որպէս անսպառ իւղ ու վառ պիտի պահէ անոր պլպլուն լոյսը: Այնպէս ինչպէս ժայռերն ու քարերը, եկեղեցաշինութեան ընթացքին, կը դադրին ժայռ ու քար ըլլալէ ու կը դառնան սրբատաշ *խտառ է*, քարեր՝ գմբէթ, խորան ու խաչքար, նոյնպէս ալ հաւատացեալներ կը փոխակերպուին դառնալու աշխարհի լոյսը ու Լուսաւորչի կանթեղին իւղը:

Հրաւերը բոլոր հաւատացեալներուն է, քայց ընտրուելու նախապայմանը անձնագոհութիւնն է: Որովհետեւ իւր դառնալէ յետոյ կեանքդ պիտի կորսնցնես, քայց ո՛չ *անձ նա որութիւնն էր*..

***«Ով որ խաչք չ'առներ ու իմ ետեւէս չի գար արժանի չէ ինձի: Ով որ կը գտնէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն. և ով որ կը կորսնցնէ իր կեանքը ինձի համար՝ պիտի գտնէ այն»--Մատթ. Ժ. 38-39:***

***«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ ցորենի հատիկը հողին մէջ իյնալով չ'մեռնի՝ միայն ինքը կը մնայ, իսկ եթէ մեռնի՝ շատ արդիւնք կու տայ: Ով որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ով որ այս աշխարհի մէջ կ'առէ իր անձը՝ պիտի պահէ զայն յաիտենական կեանքի համար»--Յիսուս--Յով. ԺԲ. 24-25***

Արթնցի՛ր Հայ հաւատացեալ ու մտիր շարքը այն անձնագոհերուն, որոնք վառ պիտի պահեն Լուսաւորչի կանթեղը: Սրբացումով և անձնագոհութեամբ, նիւթականը՝ հոգեւորի, հունաւորը՝ անհունին և ժամանակաւորը՝ Անժամանցելիին հաղորդակից կը դառնան:

## **Իւղի տեղակ նորա մէջ**

**Սրբութիւնը կ'իրագործուի կեանքով ու այդ կեանքին ճառագայթը թառայութիւնն է:** Ընդին փոխարէն դուն և ես պէտք է այրուինք: Անոնք են սրբալոյս իւղը, որոնք ապրելով հանդերձ աշխարհի *մէջ* կը մնան աշխարհէն *վեր*:

"Իւրի տեղակ" այսինքն "Իւրի փոխարէն", ուրի՛շը փոխանակող: ընդհանրապէս մարդկային ընկերայնութեան մէջ մարդ էակ կը սիրէ ուրիշը փոխարինել կամ իր ունեցածը տարբեր իրերու հետ փոխանակել: Սակայն մարդ արարածին փոխանակումը, իր ունեցածը փոխանակել է *առելի՛* արժէքաւոր առարկայի մը հետ: Մարդիկ չեն յօժարիր իրենց հանգիստը փոխանակել ուրիշի մը ծառայութեան հետ: Ձինուոր մը կը ջանայ անմիջապէս փոխարինել իր վիրաւոր տասնապետը կամ ուսուցիչ մը՝ իր տնօրէնը:

Քրիստոնէական հաւատքի և ապրումին մէջ դերերը բոլորովին շրջուած են: Յիսուս ըսաւ.

***«Ձեզմէ ով որ կ'ուզէ մեծ ըլլալ՝ ձեր սպասաւորը պէտք է ըլլայ. և ձեզմէ ով որ կ'ուզէ առաջին ըլլալ՝ ձեր սպասաւորը պէտք է ըլլայ.»***—Մատթ. Ի. 26-27:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս Ի՛նք անգամ փոխարինեց ո՛չ թէ իրմէ աւելի մեծ անձնաւորութիւն մը, այլ խոովարար ոճրագործ Փարափփան ու խաչուեցաւ անոր փոխարէն:

Լուսաւորչի կանթեղը "վառում է միջտ անշէջ", որովհետեւ բոլոր նահատակ սուրբերը մահբարբեցին իրենց հողայնութեան մղումները՝ անձնասիրութիւն, փառամոլութիւն և կեղծաւորութիւն ու դարձան լուսատու իւրը յաւերժացնելու համար Լուսաւորչի կանթեղը:

Մեզմէ քանինե՞ր յօժար են փոխարինելու այդ սրբազան իւրը: Փոխարինելով այդ իւրը պիտի չդառնանք մեծ, գօրաւոր կամ հուշակաւոր, այլ պիտի այրուինք ու մահանանք ապրեցնելու և լուսաւորելու ուրիշները:

## **Ոչ մարդկային ձեռ կը հասնի**

**Մ**արդկային ձեռքը թէեւ եղած է շինարար և ստեղծագործ, սակայն ան եղած է նոյնպէս և անչափելիօրէն կործանարար, քանթող և աղէտաբեր: Կատաղի գրոհներով անհետ կորսուեցան Անին ու Եդեսիան: Նոյն տխուր ճակատագիրը վիճակուեցաւ Ամերիկաներու Հնդկական քաղաքակրթութեան, Սպանացի վայրագ ու մոլեռանդ գաղթատերերու արջաւանքով:

Աստուած տեսնելի՛ դարձուցած է Լուսաւորչի կանթեղը բոլոր հայերուս, սակայն ձեռքով անհասանելի է ան: Անոր լոյսին կարելի է հասնիլ միայն հաւատքով ու հոգիով, որպէսզի անբարոյ և անհաւատ "գիտնականներ" չ'եղծանեն անոր սրբազան լոյսը:

Իւրաքանչիւր հայ, որուն հաւատքը կու գայ անցեալի խոր դարերէն, ունի մասնիկ մը սոյն կանթեղի լոյսէն: Այս առանձնաշնորհումը, իր հետ կը բերէ նաեւ սուրբ պատասխանատուութիւն: Պարգեւ ընդունիլ, միաժամանակ պարտաւորութիւն ընդունիլ կը նշանակէ: Պարտականութենէ խուսափում՝ անտարբերութիւն և ծուլութիւն կ'արտայայտէ:

Ներկայիս, որքան պատասխանատուութիւն կ'ստանձնենք և պաշտպան կը կանգնինք մեր հաւատքին ու եկեղեցիին: Թշնամին թէեւ չի հասնիր մարելու արարչագործ Լոյսը, սակայն չարը ունի՝ զօրութիւն կեղծելու և նենգելու անոր սրբացուցիչ ճառագայթը:

Կ'ուզե՞ս դառնալ Հայ հոգիին անխոնջ պահակը: **Մտի՛ր** ջարհը անձնանուէր հոգիներուն:

## **ԷՆ ահաւոր բարձունքին,**

**Բարձունքները** միշտ հմայագեղ կախարդութիւն ներշնչած են դիտողի մը աչքերուն: Բարձունքները, ըլլան անոնք բարոյական կամ լեռնային, կոչ ուղղած են հերոսներու սրտերուն, որ մագլցին իրենց երազային գազաթները ուրկէ պիտի ստանան երկնային տեսիլքներ: Մովսէս մարգարէ ելաւ լեռ ականատես ըլլալու Այրող Մորէնիին: Ան կրկին բարձրացաւ Մինա լեռան գազաթը ստանալու համար Օրէնքին Բարեղէն մատեանը:

Նագովրեցի Յիսուս ալ բարձրացաւ լեռ աղօթելու, բայց ո՛չ առանձինն, այլ Իր հետ բարձրացուց նաեւ Իր աշակերտները, որ ականատես վկաները դառնան Իր Աստուած-Որդիութեան: Պայծառակերպութեան լեռան վրայ, "այդ ահաւոր բարձունքին", անոնք կարողացան տեսնել պայծառակերպեալ և փառաւորեալ վսեմութիւնը իրենց Վարդապետին ու լսեցին աստուածային Ձայնը: Յիսուս Իր *Անձին օրինակովը* բարձրացուց աշակերտները և ոչ թէ հրամայելով կամ գանոնք առանձինն դրկելով:

Բոլոր հաւատացեալները և սուրբերը, որոնք կը մագլցին բարոյական և հոգեկան բարձունքներ, բարձրագլուխ և անյողդողդ կրնան կանգնիլ նաեւ մահուան ուրուականին դէմ:

Բարձունքը կ'ազատագրէ մարդը աշխարհի ժխորէն, նիւթապաշտութենէն և մարմնական հեշտութենէն: Հոն եթերին ու ամպերու քիւրեղացումին մէջ լսելի կ'ըլլայ Աստուծոյ Բնութիւնը Ձայնը, որ կ'ըսէ.

*«Եկէ՛ք ինձի, բոլոր յոգնածներ և բեռնաորուածներ, և ես պիտի հանգստացնեմ ձեզ: Իմ լուծս ձեր վրայ առէ՛ք և սորվեցէ՛ք ինձմէ, որ հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերուն հանգիստ պիտի գտնէ՛ք, որովհետեւ իմ լուծս քաղցր է ու իմ բեռս՝ թեթեւ.»--Մատթ. ԺԱ. 28-30:*

Անցեալ դարերու հայ հաւատացեալներ, իրենց հանգստեան տարիները (retirement) փոխանակ զբօսաշրջիկութեամբ անցնելու, կը մագլցէին լեռներու բարձունքները ճգնելու և աղօթելու համար, որովհետեւ հոգեկա՛ն ու բարոյական բարձունքը հասանելի է միայն անձնագոհութեամբ և աղօթքով:

Այս օրինակելի հաւատացեալները *"բարձունքներէն բարձունքներ են"*

*կանգներ ու անոնց մէջ ի բարձու եւ են երգերս.*

## **Եւ ոչ բամին կը հանգցընի՝**

**Վ**երոյիջեալ ժխտական ազդեցութիւնը (բամին), չարին բացասական ապստամբութիւնն է ընդդէմ Բարիին: Մոյն պայքարը մեկուսի կամ այժմէական հակառակութիւն մը չէ, այլ տիեզերական ու դարաւոր արջաւանք մըն է ոչնչացնելու համար մարդաշխարհը: Չարը մուտք կը գործէ մարդկային տարածութիւնը երկու զգացումներով՝ **ա.**--Երեւակայութեամբ, **բ.**--Մարմնական հեշտասիրութեամբ:

Կրնայ պատահիլ, որ Սատանան իւր բանի մը զոհեր նման Յուդայի, որ դառնան մատնիչ ու դաւաճան վասն դրամի կամ փառքի: Սակայն Եկեղեցւոյ կորիզը, այն անփակտելի միաբանութիւնը, անկորնչելի է և անյաղթահարելի:

Մահաջշունչ սառ բամին կրնայ փչել ու ոռնալ, կրնայ տատանեցնել կանթեղին բոցը բայց ի զուր: Դարաւոր անցեալին երբ Ճշմարիտ Լոյսը բուն էր մտած փոքրիկ ձկնորսանաւի մը մէջ յետ երկարատեւ Բարոզութեան, չարը դարձաւ մարմնացեալ մրրկահով (tornado) ու զարկաւ նաւուն որպէսզի ծովամոյն ընէ աշակերտները, միանգամայն թիրախ ունենելով Մարդեղեալ Յիսուսը, որ ներթափանցած էր իր պետութեան սահմաններէն ներս:

Աշակերտները թէեւ վախցան ու սուկացին ի տես այս աննախընթաց մրրկահովին ստեղծած ալեկոծութեան, սակայն շուտով արթնցուցին նաւուն մէջ Բնացող հրաշահուր Վարդապետը: Մարմնացեալ Ոգի Յիսուս ելաւ կայնեցաւ ու Իր անագնաձայն գոռումով սաստեց հովերուն և ծովուն. և մեծ խաղաղութիւն մը եղաւ և աշակերտները զարմացած ըսին իրարու. *«Ինչպիսի՞ մէկն է ասիկա, որ հովեր ու ծով կը հնազանդին ասոր»*--Մատթ. Ը.27:

Հաւատացեալներու կեանքի ընթացքին ձմեռը պիտի ըլլայ տիրապետող բնութիւնը՝ դաժան, չոր ու խիստ և բամին՝ անեղ: Որովհետեւ իւրաքանչիւր հաւատացեալ մտած է շարքը անպարտելի Քրիստոսի որ կարգախօսը հնչեցուցած է յաղթահարելու չարը, սուտը և կեղծիքը: Յիսուս կանխաձայնած է ըսելով Իր աշակերտներուն, որ այս աշխարհի մէջ նեղութիւն պիտի՛ ունենան, բայց Բաջասիրտ ըլլալու են, որովհետեւ Ան յաղթահարած է աշխարհի:

Մեր միակ պարտականութիւնն է արթնցնել *մեր մէջ բուն մտած Քրիստոսը*, մեր մէջ գտնուած թափուն Ջօրութիւնը՝ հաւատքը առ Աստուած:

## **Վիջապ-բամին ահագին**

**Պ**ատմական անցեալին անասարսուռ կոտորածն ու աղէտը կը վերագրուէր վիջապի (մեր կարծիքով, առասպելական հրեշի մը): Բազմաթիւ ազգերու աղօտ անցեալի դիւցազնական առասպելները լեցուն են

վիշապագրական պատմութիւններով:

Հոռութեան կայսերական դրօշին վրայ կը գտնուէր վիշապի մը նկարը: Ներկայիս Չինաստանի դրօշին վրայ ալ կը ծածանի վիշապանկար մը: Արջակունեաց Պարսկաստանի մէջ, վիշապը կը կարծուէր ըլլալ անձնաւորեալ օձ-դէւ (եղջիւրաւոր օձ), որուն պաշտամունքը Ն. Բ. դէպի Ա. դարը անցաւ Հայաստան ու Վրաստան:

Ինքնատիպ հեղինակ Յ. Թումանեան բանաստեղծական ջունչի հաղորդականութեամբ, "Բամին" կ'անուանէ վիշապ, որովհետեւ ամպրոպային չար ոգին, անձնաւորումը կը կարծուէր ըլլալ փոթորիկին որ կ'աշխատի կլանել արեւը իր անդնդախոր բերանով: Բայց բարի ոգիները կը կռուին անոր հետ և կ'ազատեն արեւը՝ **Լոյսը**: Փոթորիկներու որոտումը, կռիւ-մենամարտի ժխորն էր, իսկ կայծակը՝ արեւի փայլատակումը: Այս մտապատկերի ընդմէջէն լաւագոյնս կ'ըմբռնենք հանճարեղ բանաստեղծին միտքը:

### **Երբ պատում է մութ խաւարը**

**Մ**արդկային ժամանակը երկու անհերքելի երեւոյթներէ կը բաղկանայ՝ լոյսէ և խաւարէ, որոնք կը կազմեն ցերեկը և գիշերը: Բնական խաւարին մէջ, իրերու իսկութիւնը չ'երեւիր, չենք կրնար զանազանել և ճշդել անոնց գեղեցկութիւնը կամ տգեղութիւնը:

Պէտք է այնպէս կարծենք, թէ միայն Հայաստան աշխարհ պատեցաւ խաւարով երբ արիւնկզակ Մոնկոլներ արջաւեցին և աւերեցին աշխարհն Հայկազեան: Երբ դիտենք անցեալը, հոն կը տեսնենք բազմաթիւ ազգեր ու քաղաքակրթութիւններ, որոնց վրայ խաւարակուռ մութը ծածկած էր իր ամենի ջղարջը: Եւրոպա, խաւարակուռ դարերու անկերպարան խառնարան մըն էր, երբ Պաղտատ, իբրեւ կեդրոնը Իսլամութեան, կ'ապրէր իր ոսկեդարը Յ-րդ դարուն:

Մարերը, Ասորիները և Բաբելոնեան կայսրութիւնը ոչ միայն խաւարեցան, այլ կլանուեցան խաւարակուռ խորխորատներու մէջ ու կորան ի սպառ: Անդին, փոքրիկն Հայաստան՝ իր *հաւատքի*՝ վահանով ու Քրիստոսի անձնուրաց զօրութեամբ խափանեց չարը, փոխեց խաւարը Լոյսի և տրտմութիւնը ուրախութեան: Մէկ ծաղիկով չգար գարուն, բայց մէկ մոմավառութեամբ խաւարը կը լուսաւորուի:

### **Չնաշխարհիկ մեր երկրին,**

**Ի**նչո՞ւ հեղինակ Յ. Թումանեան "չնաշխարհիկ" կը կոչէ Հայաստան աշխարհը: "Չնաշխարհիկ" բառը կը նշանակէ անզուգական, գեղեցիկ, սքանչելի և գերապանծ: Հայաստան, ինչո՞վ անզուգական է: Իր կորսնցուցած ճակատամարտներով, իր աւերակուած եկեղեցիներով, վեց հարիւր տարուայ

Օսման կրունակին տակ հեծելո՞վ և մեկ ու կես միլիոն աներեւակայելի Մեծ եղեռնո՞վ:

Իր **հաւատո՞վ** և յամառ տոկունութեամբ: Մամիկոնեան արծիւներու և Մեսրոպաւրյս հանճարներու հայրենիքը, նման Եւրոպական ազգերու, փոխ չ'առաւ իր այբբենգիմը Լատին լեզուաբանութենէ, այլ ի՛նք հնարեց իր լեզուին պահանջին համեմատ գիր ու գրականութիւն: Իր փոքրիկ ածուն՝ Արարատեան աշխարհը ընդարձակելու համար, ուրիշ ազգերը չգերեվարեց և անոնց հայրենի հողը չբռնաբարեց: Զաղափակրթութեան և յառաջդիմութեան դիմակի տակ, գաղթասիրութիւններ չկերտեց ուրիշներու արեան գնով: Փառատնչութեան և հարստութեան համար զինեալ ճակատամարտներ չգործադրեց: Եթէ երբեք զէնք վերցուց, այդ զէնքը ինքնապաշտպանութեան և հաւատի՛ պաշտպանութեան համար էր միայն: Բարոյականը, իրաւունքը և պատիւը նիւթական արժէքներու համար ծախու չդրաւ:

Հայ Բրիստոնեայ ժողովուրդը ընտրեց դժուարին *գարիվերը*, որ լուսաճածանջ գազաթներու վրայ վսեմութիւն կու տայ բարոյական արժանիքներու: Ան իր բարոյական կեանքը ծաղկեցուց *կրօնակա՛ն* հողի վրայ՝ Եկեղեցիին: Ներկայի մեծ և հզօր կարծուած ազգերու իմացական և բարոյական վիճակը ողբալիօրէն անմիխիթարական է ու դէպի գահավէժ կը թէփի: Բարոյական ուժը ի վերջոյ աւելի ուժեղ և աւելի յաղթական կը դառնայ քան թէ նիւթական ուժը:

Հայրենի աշխարհը անզուգական է որովհետեւ Աստուածաշունչ մատենը ան թարգմանեց 5-րդ դարուն, մինչ Եւրոպա՝ 15-րդ դարուն: Պարսիկ Մագտէութիւնը ջանաց վերադարձնել Հայր Մագտէութեան, սակայն չկրցաւ 5,րդ դարու Աւրայրի ճակատամարտով: Երկու դար յետոյ ուղտապան բանակներ բռայիկ ոստերով եկան Արաբական անապատէն ու կործանեցին Պարսկական ուժը ու ենթարկեցին գայն Իսլամ կրօնի: Պարսիկները դարձան Իսլամ նիւթի և փառքի համար, իսկ Հայր շարունակեց պահել Զրիստոսի հաւատքը, Բաջաբար զոհելով իր արիւնը:

Հայր հպարտ է իր կատարելատիպ լեզուին, պայծառ հաւատքին, հայրենանախանձ հոգիին և անստուեր հայրենասիրութեան համար: Մենք ոչ միայն մեր ծնողներո՛ւ զաւակներն ենք, այլ՝ նաեւ Զրիստոսի համար նահատակուո՞ղ *հայրենիքին*:

Զրիստոնէութիւնը հայրենասիրութեան գաղափարը չի ոչնչացո՛ւց, այլ՝ *սրբացուց*:

## **Երբ տիրում է ահն ու վախը**

**Կ**եանքի մէջ միշտ տիրո՞ղ եղած է ահն ու վախը: Մեծ ձուկը կուլ կու տայ պզտիկ ձուկին: Յովազը կը սպաննէ եղնիկը և ասպատակող ու

վաչկատուն ժողովուրդներ կը կործանեն դրախտավայր երկիրներ ու մոխրակոյտի կը վերածեն ֆաղաֆներ: Կարծես վախի ու ահի, տաժանելի կիրքն ու զգացումը մեր մէջ, կը յարուցանէ վտանգաւոր վիճակ մը կամ կը ջանայ տէր դառնալ մեր էութեան: Աշխարհ սրտատրոփ կը սպասէ ահաւոր դէպքերու անխուսափելի թաւալումին:

Իրիկուան խաւարն ու մայրամուտը չենք կրնար արգիլել, մեր կարողութենէն վեր են անոնք: Մարդկային հնարամտութիւնը, խաւարը արգիլելու փոխարէն, հնարած է մոմավառութիւնն ու կանթեղի լոյսը: Ներկայիս կարգ մը ֆաղաֆներու իրիկուան խաւարը փոխակերպուած է ցերեկուան լուսավառութեան և գուարճութեան, օրինակ՝ Լաս Վեկասի հրապարակները: Ծնորհակալութիւն ելեկտրական հոսանքին:

Երբ պատէ ահն ու վախը մարդկային սրտին ու մտքին, մարդ ունի՝ զօրութիւն մը վանելու և դուրս վտարելու այդ ահաբեկիչ վախը: Այդ զօրութիւնը աստուածատուր **հաւատքն** է: "Վախ"ը կրնայ նաեւ ունենալ իր դրական օգտակարութիւնը եթէ մենք զօրաւոր ենք հաւատքով: Յիսուս Քրիստոս Իր աստուածատես իմաստութեամբ ըսաւ.

***«Մի՛ վախնա՛մ անոնցմէ, որ մարմինը կը սպաննեն և անկէ վերջ՝ աւելի բան մը չեն կրնար ընել: ...Բայց վախցէ՛ք անկէ, որ սպաննելէ յետոյ իշխանութիւն ունի գեհէն նետելու: Այո՛, կ'ըսեմ ձեզի, անկէ՛ վախցէ՛ք»*** --Ղուկ. ԺԲ. 4-5:

Վիկերոն, Հոռմի վերահաս վտանգին ահագնազը հնչեցուց. *«Աննիբալը մեր դրանն է»*, մեր դրներուն կանգնած է ըսելով: Լէնկ Դիմուրէն մնացած է միայն իր ահասարսուռ անունը: Արեւմուտփի նիւթապաշտական անաստուածութիւնը, այսօր, աւելի ահարկու է, քան թէ Համայնավար անաստուածութիւնը: Գոնէ Ռուսերը բացայայտ էին, ո՛չ դիմակաւոր: Ամէն մէկ «ես»ականութիւն բարոյական մահափորձ մըն է, իսկ անձնուրացութիւն և ծառայութիւն կեանք և ուրախութիւն է թէ՛ կատարողին և թէ՛ ստացողին համար:

Խաչելութենէ յետոյ երբ տիրութիւնը և վախը կը տիրապետէր աջակերտներու սրտին մէջ, Յիսուս Ի՛նք ներկայացաւ անոնց և ըսաւ.

***«Խաղաղութիւն ձեզ»***: Արթնցի՛ր Հայ ժողովուրդ քու մահաթմբիրեդ ու փարատէ վախը: Նայէ՛ Յիսուսի, որ մահամերձներուն արիութիւն կը շնորհէ, յուսահատներուն յոյս կը ներշնչէ և ճնշուածներուն խիզախութիւն կը պարգեւէ:

## Թոյլ, կասկածոտ սրբերին

Բարոյական գորութեան խորտակումը՝ անկում և յուսալուծիւն է դէպի մահ: Անկարելի է յարատեւօրէն սրտոտ և քաջ ըլլալ: Հողաջէն մարդը միջոտ ենթակայ է սայթափելու, կասկածելու և թուլանալու: Հոգեկան սոյն վիճակները դառնալու չեն վերջին հանգրուաններ, այլ անցողակի սարսուռներ միայն, որովհետեւ սիրտը չի ֆնանար, այլ միայն կը թմրի:

Հաւատացեալի մը սիրտը պարտի ըլլալ հզօր, սէրը անսահման և վարձը անըմբռնելիօրէն գորովալից: Ոչ կրակը և ոչ հարուածը կրցաւ թափանցել հաւատաւոր հայու սիրտը: Վարդանանց ճակատամարտին, Ղեւոնդ երեց խօսք մը կամ յորդոր մը չէ որ ուղղեց հայ քաջերուն, այլ իր *սի՛րտն* է որ բաշխեց բոլորին:

Յիսուս դիտեց ժողովուրդին աչքերը քաղցր, աչքերը սրտում և դարձաւ հրեղէն Սիւն և լոյսէ Սանդուխ առաջնորդելու զանոնք դէպի լուսայորդ կենսալորտ՝ յաւերժական երանութիւն:

## Ով անմեղ է, լիբը սիրով

**Յ.** Թ ումանեան, ճշմարիտ ժողովրդային կը համարէր այն գրականութիւնը, որուն մէջ կը տեսնէր՝ ազգային ոգի, վիշտ, ուրախութիւն, սովորութիւն և զգացմունք:

Ինչո՞ւ անմեղութիւնը հրապուրիչ է նոյնիսկ մեղաւորին համար: Որովհետեւ անմեղութիւնը կը նմանի շուշանաբոյր մանուկի մը, որուն անարատութիւնը չէ եղծանուած: Անմեղութիւն շնչող մանկական տիպարները անբիծ են ու անխարդախ: Նախախնամութիւնը գործածեց ազգապիղծ Հերովդէսը, որ յայտարարէ Յիսուսի *անմեղութիւնը*:

Անմեղները և անմեղութեան սլացողները լեցուած կ'ըլլան սիրով, որովհետեւ իրենց սրտերէն վտարած են վրէժը, ատելութիւնը, նախանձը և դառնութիւնը: Նոյնիսկ Աստուծոյ միտքը և հեռանկարը յայտնուած է Իր *սիրո՛յն* մէջ: Աւետարանի իւրաքանչիւր դրուագ՝ ցոյժ մըն է Աստուծոյ սիրոյն: Բազմաթիւ են գիտութեա՛ն և մտքի՛ մարդիկ, բայց փոքրաթիւ է *սրտի՛* մարդը: *Մէրն ու վիշտը, հաւատն ու փորձութիւնը պիտի կազմեն նախանիւթը արարչական և էստարդը ծնւցիչս:* Սէրը..., Յիսուսի նման չարչարուած, խաչուած ու թաղուած բառ մըն է մեր սրտերուն մէջ: Արթնցնե՛նք մեր սրտերուն մէջ թաղուած սէրը, յարուցանե՛նք սիրոյ ջերմութիւնը, որ պիտի վանէ մեր ատելութիւնը, նախանձը, եղբայրասպան *անհանդուրժողութիւնը*: ու պիտի շնորհէ մեզ *միասնականութեան* գաղտնիքը:

Աստուածային սէրը ինչպէս որ խոնարհեցաւ աշխարհ, պարգեւելու սէր

և իմացական կեանք մարդ արարածին, մարդ՝ ի՛նք եւս *բարձրանալուն* է դէպի տիեզերական Մէրը և Կեանքը ուր պիտի գտնէ իր Արարիչը և Տէրը: Զօրաւորագոյն սէրը՝ անձնանուիրումն է ու նուաճումը մահուան:

Երբ դիտենք Ա. Խաչեղութիւնը Գողգոթայի Բարձունքին վրայ, հո՛ն կը տեսնենք վիշտին սրբութիւնը, հաւատքին զօրութիւնը և սիրոյ ծննդագործող Երկունքը:

## Ու հաւատով անսասն,

Ի նչպէս մեռած սէր կայ ու ակնկալուած յոյսերու հիասթափութիւն, նոյնպէս կայ *մեռած* հաւատք: Կրօնքի գաւիթն ու նախադուրը *կենդանի*՝ հաւատքն է: Հաւատք, սէր և բաջութիւն Ա. Գ. Լուսաւորիչը բնորոշող առաքինութիւններն են, պարգեւուած Յիսուս Բրիստոսէ: Անսասան հաւատքի և անսպառ սիրոյ սպասաւորներն էին Հայ Եկեղեցւոյ նահատակ սուրբերը:

Այսօր ալ Ա. Էջմիածնայ հաւատակառոյց գմբէթը *«Հնչում է իբրև անդունելի զանգակատուն, հոգեպարար մեղեդի»* ներշնչելով հաւատք, յոյս և սէր իր աշխարհացրիւ գաւակներուն:

Հաւատալու համար գոյութիւն չունի ժամանակ, տեղ, ազգութիւն, կրօնք, գաղափար, տարիք կամ գեղեցկութիւն, էականը՝ *հաւատա՛լն* է:

Մէր և հաւատք անբաժան են իրարմէ, նման մարմնի և հոգիի: Ուր սէր կայ, հաւատք ալ կայ և ուր հաւատք կայ, հոն սէր կայ: Հաւատքը կեանքին իմաստ կու տայ և կեանքը կը դառնայ սիրոյ արտայայտութիւն:

*«Հոգիին հաւատացողը, հոգիով ապրողը, հոգեկան արժէքներ ստեղծող և զանտնէլ յարգել գիտցող ազգը գերեզման չունի»* կ'ըսէ **Գարեգին Ա.**

**Կաթողիկոս:** **"Հաւատով Խոստովանիմ"**ը յաւերժական լուսաւոր փարոս մըն է Բանդակուած մեր սրտերուն մէջ **Ա. Ն. Ծնորհալիին** սրտով: Մեհենական աշխարհահայեացք ունեցողներու համար, հաւատքը կրնայ ըլլալ զառանցանք, իսկ հաւատաւորի համար՝ կեանք է, զօրութիւն և փրկութիւն: Ուստի մշտավառ պահենք մեր հաւատքը ու դարձնենք զայն որակական ու ոգեկան ներկայութիւն:

**Մեր հաւատքը թող դառնայ անխորտակելի, մեր յոյսը՝ լուսաւոր և մեր սէրը՝ անփոխարինելի:**

## Ով նայում է վառ յոյսերով

Մահէն դէպի կեանք, կեանքէն դէպի առաւել կեանք և դէպի անմահութիւն: Ա՛յս է Բրիստոսահիմն հաւատքի զօրութիւնն ու յոյսը: Յիսուս Բրիստոս յոյս կը ներշնչէ յուսահատին, խաղաղութիւն՝ հոգիով տառապողին և մխիթարութիւն՝ սգաւորին: Կարգ մը անուանական Բրիստոնեաներ, Յիսուսի գերեզմանին մէջ թաղած են իրենց յոյսն ու հաւատքը:

Գերեզմանը չէ՛ր որ Յարութիւն տուաւ Յիսուսի, այլ՝ Աստուած:

Մեծն Աղեփսանդր, իր աշխարհածաւալ արջաւը սկսելէն առաջ, ամբողջ իր ունեցածը կը բաժնէ իր գօրավարներուն: Երբ անոնք կը հարցնեն իրենց հրամանատարին ըսելով.

«Բեզի՛ ի՞նչ մնաց», մեծն Աղեփսանդր կը պատասխանէ.

**«ՅՈՅՄ»:**

Յոյսը հոգեբանական գօրութիւն է ու միաժամանակ խրախոյս:

Լուսաւորչի կանթեղը կրօնական վարդապետութիւն մը չէ, եկեղեցական դրամահաւաքի պատճառ մը չէ, բանաստեղծական պոեմ մը չէ, այլ՝ յուսատու լոյս մըն է ան և առաւել՝ **կենդանի Անձ նաւորութիւն** մը՝ Լուսեղէն Յիսուս Զրիստոս Ի՛նքն է մեր յոյսը և լոյսը:

Կան նաեւ սկեպտիկեան յոռետեսութեամբ փոթորկած յուսահատներ: Ասոնք անասուածներ չեն, աստուածընդդէմ գործակալներ չեն, այլ իրենք գիրենք գիտնական և ուսեալ կարծող սովեստներ: Իրենց մանկութեան մկրտուած ու դրոջմուած են: Պատանեկութեան Ս. Խորանին վրայ երգած ու դպրաց դասին հետ հաղորդուած *էրերու և անհատատատ* հաւատացեալներ են, կորսուած են, սակայն կորսուած **ոչխարներ** են:

Յիսուս Փրկիչ ասո՛նց ալ կը սիրէ: Ոչ միայն խօսքո՛վ կը սիրէ, այլ՝ կը պտըտի բոլոր լեռներն ու ձորերը որ գտնէ զանոնք: Յիսուս հեզ է ու սրտով խոնարհ: Ան գնաց մինչեւ թերահաւատ Թովմասին մօտ ու յայտնե՛ց Ինքզինքը, ցոյց տուաւ անոր Իր խաչելութեան վերքերուն նշանները և քաղցրութեամբ խնդրեց անկէ ըսելով.

**«Մի՛ ըլլար անհաւատ, հապա հաւատացեալ»:**

Եթէ կան մեր մէջ թերահաւատ Թովմասներ և կասկածամիտ երկմիտներ, Յիսուս անոնց ալ բնութաբան կ'ըսէ. Մի՛ ըլլար թերահաւատ, մի՛ կասկածիր իմ խօսքերուս, դադրեցուր բու անհաւատութիւնդ ու դարձի՛ր հաւատացեալ: Նայէ՛ Լուսաւորչի կանթեղին որ տակաւին պլպլուն է ու վառ: Մասնակի՛ց ըրէ բու անձդ անոր իւղին ու դուն ալ պիտի դառնաս լուսեղէն:

**Դէպի հայոց ապագան--,**

Յոյսո՛վ կը դիմաւորենք ու կը դիմակալենք Ամանորն ու ապագան: Այս աշխարհի հողայիններո՛ւն համար ապագան անջատ է ներկայէն, իսկ ամենատես և ամէն տեղ ներկայ Արարիչ Աստուծոյ համար, անցեալն ու ապագան միաձուլուած են յաւիտենական **ՆԵՐԿԱՅԻՆ** մէջ:

Հաւատացեալ հայը "նայում է վառ յոյսերով դէպի հայոց ապագան", որովհետեւ *ապագան* և *արդարութեան* կշիռը Աստուծո՛յ Ձեռքն են, որ կ'առաջնորդէ Իրեն յուսացողները խաւարէն (գրկանքէն) դէպի լուսաշող

ապագան: Անստոյգ ապագայով և ափսոսալի ճակատագրով չէ՛ ապրած հայր, ան երկնային տեսիլքներու հաղորդ եղած՝ ու թափանցելով անոնց խորհուրդին, քերթողած է Նարեկ՝ "Մատեան Ողբերգութեան"ը և զմայլելի ու հոգեթով շարականները:

Յիսուս Քրիստոս ճշմարիտ Ապագա՛ն էր անցեալին դէմ կանգնած: Բոլոր մարգարէները և սուրբերը հաւատքի և ապագայի տեսանողները եղած են: Ս. Գ. Լուսաւորիչ երբ կը ճգնէր իւր Վիրապին մէջ, վառ յոյսերով կը նայէր "դէպի հայոց ապագան": Իր հաւատքն ու յոյսն էր, որ պահեցին զինք հաստատ թէ՛ հաւատքի և թէ՛ յոյսի մէջ, մինչեւ ծիածանիլը ջողջողուն ապագային ու կառուցումը Ս. Էջմիածնին: Անցեալը դրուատող և ապագային ճամբուն վրայ յոյսեր սերմանող եկեղեցականներն են, որ հայ ազգը պահեցին Քրիստոսի վրայ խարսխած: Հայր մէ՛կ անցեալէն կու գայ և ճակատագրուած է մէկ ապագայի՝ Քրիստոսի՛ համար:

## Նա կը տեսնի էն մըջտավառ

Երկինքն է որ մեզ կը ներշնչէ ապագայի նոր արջալոյսներու:

Հաւատքի փորձառութեան մէջ, մարդ կը հասնի հանգրուան մը, ուր հաւատքը կը դառնայ տեսութիւն և երազը արթուն իրականութիւն: Աշխարհի վրայ կան ու պիտի գոյատեւեն յոռետեսներ և սկեպտիկներ, սակայն իսկականը և ստեղծագործ տեսլականը՝ **լաւատեսութիւնն** է, մարդոցմէ այնքա՛ն յամառօրէն փնտրուած: Մարդ միջոտ լաւատես եղած է, նոյնիսկ յոռետես մարդը, բայց անգիտակցաբար: Մարդ իր լաւատեսութեան մէջ իսկ կը փորձուի և հակամէտ է յոռետեսութեան: Մահուան իրականութեան իսկ առջեւ, մարդ կը բացագանչէ, «Ձե՛մ հաւատար»:

Որքա՛ն երանելի է հաւատացեալ մը որ ունի *գոյթօ՛Ն* հաւատք: Յիսուս, օդին մէջ սաւառնող գաղափար մը չէ, այլ սուրբներու տեղ՝ բուն ճշմարտութիւնը որ կը ճառագայթէ: Փոխանակ աճիւն մը ըլլալու Իր աջակերտներու սրտին մէջ, Ան դարձած է յաւերժական ջունչ և ոգի: Հաւատքի կանթեղը մշտավառ է բոլոր հայերուն համար: Անոնք թաղուեցան քարերու տակ, բայց ջահին բոցը վառ մնաց քարերուն վրայ Յիսուսատիպ խաչքարերով տօնելու համար հրաշափառ Յարութիւնը:

Իմեցէ՛ք Հայեր, դէպի մշտավառ կեանք, դէպի լոյս առաւօտ հաւատքով և լաւատեսութեամբ: Յիսուս Քրիստոսի մօտ կա՛յ յոյսի, լոյսի, լաւատեսութեան և Յարութեան թափուն ջունչը:

## Չահր կախուած երկնքից

Չահր կախուած է երկինքէն անպարան: Աստուծոյ հրամանով (խօսքով) կայնած է ու յամրաբար կ'իջնէ երկիր նման նոր երկնային երուսաղէմի:

*«Եւ ցոյց տուաւ ինձի մեծ և տարր քաղաքը՝ Երուսաղէմը,  
որ իջած էր երկինքէն, Աստուծոյ մօտէն»--Յայտ. ԻԱ. 10:*

Ամէն ինչ որ երկինքէն կախուած է մշտավար կը դառնայ, որովհետեւ այդ լուսատու ջահերուն Խնամակալը Ի՞նքն է Աստուած: Չարը ո՛չ ջահ ունի և ոչ ալ կանթեղ: Ան ջահն ու լոյսը մարելո՛ւ հնարամտութիւնը ունի միայն:

Ա. Գ. Լուսաւորիչ վառած ու կախած է կանթեղը երկինքի մէջ: Ան մեզի՛ վստահած է անոր պաշպանութիւնը: Այլեւս այդ երկինքի ջահը՝ **ՄԵ՛Ր** ջահն է, մերն է ու ո՛չ դրացիինը: Որքա՞ն հաւատարիմ ենք զայն պահելու մէջ: Մեր աշխատանքին որչա՞փը կը նուիրենք անոր, մեր եկամուտին ի՞նչ տոկոսը կ'ընծայենք անոր պահպանութեան: Մեր ժամանակէն որքա՞նը կը տրամադրենք անոր: Վկայութեան և մեր առօրեայ ապրումով որքա՞ն կը ցոլացնենք անոր լոյսը:

### **Ասես՝ Աստուծոյ աչքը պայծառ**

**Ա**ստուծոյ պայծառ աչքը հոգիո՛վ կը տեսնէ՝ որ ոչ հորիզոն ունի և ոչ սահմանում, այլ՝ Անոր տեսողութեան թռիչքը կը տեսնէ թէ՛ ժամանակի և թէ՛ միջոցի անհունութիւնը: Աստուած, բարեկամական կամ թշնամական աչքով չի դիտեր ու չի չափեր մեզ, այլ գթութեամբ, ողորմութեամբ և սիրով:

Աստուծոյ աչքը պայծառ ու ամենատես, սակայն միջոտ տխուր և սպասումի մէջ է, նման "Անառակ Որդի"ին հօր, որ վերադարձին կը սպասէ Իր ամենասիրելի արարածին՝ ստեղծագործութեան գերահրաշ մարդ արարածին: Աստուած ազատագրած է մեզ Տէր Զօրի մահաբունէն: Օգնած է որ կառուցանենք եկեղեցիներ ու դպրոցներ, մարզադաշտեր ու մշակութային կեդրոններ, կը հրատարակենք բազմատեսակ թերթեր ու գիրքեր: Այս բոլոր աշխատութեան և յոգնութեան մէջ, որքա՞ն մեր աչքերը կը նային Անոր խոր կարօտի Աչքերուն: Կը մոռնա՞նք արդեօք թէ ֆիզիքական աչքերով կոյր եղողներուն դժբախտութենէն շատ աւելի դժբախտ են մտքո՛վ և հոգիով կոյրերը, որոնք տակալին անփոյթ կերպով կը դանդաղին մտաւոր կուրութեան լաքիւրիինթոսներուն մէջ:

Յիսուս՝ Իր ամենատես Աչքով գիտէր կարդալ սրտերու գաղտնիքները: Մենք ալ ունի՞նք գաղտնի մեղքեր և կուտակուած չար գգացումներ, որոնք դուրս կը ցայտեն մերթ ընդ մերթ ու մեզ ամօթով կը ձգեն: Մօտենանք մեզ Սպասող և յոյսի վառ Աչքերով նայող Հա՛յր Աստուծոյ ու ծնրադիր երկրպագական արցունքներով թողութիւն խնդրենք Իրմէ, որ ներող է ու անյիջաչար:

Ան է որ կը հսկէ մեր վրայ "ցած երկրնե՛րց": Այլ խօսքով՝ **խոնարհած** է դէպի մեզ ցոյց տալու Իր անսպառ սէրն ու ողորմութիւնը: Աստուած խոնարհած է և իջաց երկինքէն երկիր, հսկելու բոլոր հաւատացեալներուն

վրայ անխտիր: Ան կը հսկէ մեր վրայ փոխակերպելու մեզ որպէս Իր գործակիցները:

Ձեպարտանանք ու չդատենք "Լուսաւորչի կանթեղ"ը որպէս եկեղեցական աւանդութիւն ու բանաստեղծական խօսքեր միայն: Լուսաւորչի կանթեղին մէջ տեսնենք Յիսուսի Աջները որոնք կարծես կը նային անդենականէն ու կը դպչին մեր աջներուն: Անոր անբարբառ մրմունջը կ'ըսէ քեզի և ինծի:

***„Իմ ետելես եկուր»:***

Մի՛ յետաձգեր Իր կանչը: Անոր կանչը բնֆուշ է ու սիրալիր: Աստուածային ջնորհք է ստանալ տեսիլք, լոյս, պատգամ ու կոչում: Եկեղեցւոյ մեծագոյն կոչումը սիրոյ գործունեութիւնն է՝ սպասաւորութիւն և ծառայութիւն: Աստուծոյ լծակցութեամբ մարդ կրնայ իր կոչումը իրագործել այս աշխարհի վրայ:

Կիւրենացի Միմոն երբ արժանացաւ կրել Նազովրեցի Մարգարէին Խաչը, Յիսուսի աջները խորունկէն ժպտեցան ու դպան Միմոն Կիւրենացիի աջներուն: Յիսուսի ժպտադէմ Աջներու նայուածքը քանդակուեցաւ երկնային սոմարին մէջ, գուգահեռ Անոր ցաւատանչ տառապանքին:

***Մեր սպասաւորութիւնը և նուիրումն ալ  
ժպի՛տ մը պիտի դրոշմէ Աստուծոյ  
Հայրական Աջներուն խորը:***

**Յուլիս 17, 1993**

**Թորոնթօ**